

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԷԹՆՈ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1840 - 50-ական թթ.)

Պարսկահպատակ հայերի և, մանավանդ, արևմտահայերի զանգվածային ներգաղթերը 1829-1831թթ. Փամբակ-Շորագյալի տարածք բերեցին հայ գաղթականների հազարավոր ընտանիքներ՝ դիստանցիայի բնակչության թիվը 1824-1825թթ. գրանցված 2150 ընտանիքից հասցնելով 5171 ընտանիքի (28975 մարդ): Կտրուկ փոխվեց դիստանցիայի ազգաբնակչության կրոնադավանաբանական պատկերը: Եթե 1824-1825թթ. հայերը կազմում էին ընդհանուր բնակչության թվի 70%, իսկ այլազգիները՝ 30%, ապա ներգաղթերից հետո հայերի թիվը հասավ 95%-ի, փոխարենը այլազգիների թիվը նվազեց մինչև 5%: Ընդ որում, միատարրությամբ (հայաշատությամբ) ամբողջ դիստանցիայում առանձնանում էին Շորագյալի գավառը և հատկապես Գյումրին, որ XIX դարի 30-ական թվականների վերջերին արդեն համարվում էր ամենահայաշատ քաղաքն ամբողջ Անդրկովկասում:¹

Շորագյալի գավառի 2516 ընտանիքից հայեր էին 2482-ը (14317 մարդ)՝ գավառի գյուղական բնակչության ընդհանուր թվի ճնշող մեծամասնությունը՝ 98.6%, մահմեդականներ էին միայն 34 ընտանիքը (128 մարդ), այսինքն բնակչության միայն 1.4%-ը: 1350 ընտանիք ունեցող Գյումրիում հայեր էին բնակչության 96%-ը, հույներ՝ 3%-ը, իսկ մահմեդականներ՝ միայն 1%-ը:² Համեմատության համար ասենք, որ Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքում՝ Երևանում, նույն 1829-1832թթ. բնակչության ընդհանուր թվից՝ 2751 ընտանիքից (11463 մարդ) հայեր էին 944 ընտանիքը (4132 մարդ) կամ միայն 34%-ը, իսկ մահմեդականներ՝ 1807 ընտանիքը (7331 մարդ) կամ 66%-ը:³ Այս ցանկում թե՛ հայ բնակչության թվով և թե՛ մահմեդականների հետ նրանց ունեցած տոկոսային հարաբերությամբ երրորդն ու վերջինը Փամբակի գավառն էր, որտեղ 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով ապրում էր 1305 ընտանիք (7280 մարդ), որից հայեր էին 1133 ընտանիքը (6249 մարդ)՝ 86.8%-ը, և այլազգիներ, գերազանցապես մահմեդականներ էին 172 ընտանիքը (1031 մարդ) կամ 13.2%-ը:⁴ Հայահավաքման գործընթացը Հյուսիսային Հայաստանի այս հատվածում շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ հարյուրավոր գաղթական ընտանիքներ, չհամակերպվելով իրենց նոր բնակավայրերում ստեղծված պայմաններին, նորից բռնեցին գաղթի ճամփան, որը նրանցից շատերին (459 ընտանիք) բերեց Փամբակ-Շորագյալ: Արդյունքը եղավ այն, որ երկրամասում իր բնակչության միատարրությամբ առանց այն էլ աչքի ընկնող Շորագյալի գավառի գյուղական ազգաբնակչության թիվը XIX դարի 30-ական թվականների վերջերին հասավ 2830 ընտանիքի, որից հայեր էին 98.8%-ը (2796 ընտանիք), մահմեդականներ՝ 1.2%-ը (34 ընտանիք):

Երեսնական թվականների երկրորդ կեսին դիստանցիա վերագաղթած 459 ընտանիքներից Փամբակի գավառի 41 գյուղերում⁵ տեղավորվածները (145 ընտանիք) և՛ քանակապես, և՛ էթնո-ժողովրդագրական կազմով զգալիորեն տարբերվում էին Շորագյալի գավառում հաստատվածներից (314 ընտանիք), որոնք միայն հայեր էին: Մինչդեռ Փամբակում հաստատված նորեկներից հայեր էին միայն 117 ընտանիքը (701 մարդ), 28 ընտանիքը մահմեդականներ էին (58 մարդ), ռուսներ և հույներ (111 մարդ)⁶: Այստեղանդերձ Փամբակում ևս XIX դարի 30-ական թվականների վերջերին գրանցվեց

¹ Հ. Լ. Ի. Ն. Հայաստան Ուղևորություններ և ուսումնասիրություններ, հ. Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 61:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83, 84:

³ С. З е л и н с к и й, Город Эриван, "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", (այստեղևտև՝ СМОНПК), вып. 1, отд. 1, Тифлис, 1881, стр. 40-41.

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82:

⁵ Չ. Կ. Ն. Ի. Ն. Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932., էջ XXIX-XXX:

⁶ Նույնը:

ազգաբնակչության թվի աճ մինչև 1450 ընտանիք (8150 մարդ)⁷: Ընդ որում, գավառում հայերի քանակը, թվապես զգալիորեն աճելով, 1829-1832 թվականների 1133 ընտանիքի փոխարեն 1830-ականների վերջին հասավ մինչև 1250 ընտանիքի (6950 մարդու), իսկ այլազգիներին՝ միայն 200 ընտանիքի (1829-1832թթ. 172 ընտանիքի փոխարեն): Այնուամենայնիվ տոկոսային հարաբերությամբ հայ ազգաբնակչության թիվը գավառում ոչ միայն չավելացավ, այլև նվազեց 0.8%-ով՝ կազմելով գավառի ընդհանուր բնակչության ընդամենը 86%-ը, այն դեպքում, երբ այլազգիների թիվը, չնայած չնչին համալրմանը (28 ընտանիք), նույն չափով ավելացավ՝ կազմելով 14%:

Այսպիսով, XIX դարի 30-ական թվականների վերջին՝ Ալեքսանդրապոլի գավառի կազմավորման նախօրեին, ապագա գավառի հիմք հանդիսացող Փամբակ-Շոքազյալի դիստանցիան ուներ էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական հետևյալ պատկերը: Միայն գյուղական ազգաբնակչության թիվը կազմում էր 4280 ընտանիք (24017 մարդ): Ընդ որում, իբրև դիստանցիայում ճնշող մեծամասնություն, հայերը 4046 ընտանիք էին (24017 մարդ) և կազմում էին դիստանցիայի գյուղական արևակչության ընդհանուր թվի 94.5%-ը, այն դեպքում, երբ այլազգիները 234 ընտանիքով (1328 մարդ) դիստանցիայի գյուղական բնակչության մեջ բացարձակ փոքրամասնություն էին՝ միայն 5.5%:

Ցավոք, արխիվային նյութի բացակայության պատճառով չենք կարող որոշակի պատկերացում կազմել նույն այդ ժամանակահատվածում Փամբակ-Շոքազյալի դիստանցիայի միակ քաղաքը հանդիսացող Ալեքսանդրապոլի էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական իրավիճակի մասին: Կան մի քանի աղբյուրիկ տեղեկություններ. այսպես, 1834թ.-ին Ապարանի Ջամգիի մահալի Մալին-քենդ գյուղից 5 ընտանիք⁸ իսկ Փամբակի Կարաքիլիսայից մոտ 100 ընտանիք նախկին էրզրումցիներ⁹ են վերաբնակվել Գյումրիում, դրան հակառակ՝ մոտ 77 ընտանիքներ էլ թողել են Գյումրին՝ հեռանալով անհայտ ուղղությամբ:¹⁰ Մնում է ենթադրել, որ վերոնշյալ տեղաշարժերը, որոնք երբեք էլ նշանակալի և խոշոր իրադարձություններ համարել չի կարելի քաղաքի կյանքում, ի զորու չէին 40-ական թվականների սահմանազլխին առաջ բերելու Գյումրու կրոնադավանաբանական պատկերի էական փոփոխություններ, երբ հատկապես թուրքահայերի ներգաղթի, ապա 40-ական թվականների սկզբներին տեղի ունեցած նոր ու բավականին իրատեսական վարչատարածքային բարեփոխման հետևանքով ձևավորվեց Անդրկովկասում ազգաբնակչության կազմի տեսակետից ամենամիատարր ու հայեցի Ալեքսանդրապոլի գավառը:

Գավառի ազգաբնակչության կազմի միատարրությունը փոքր-ինչ խախտվեց միայն XIX դարի 40-ական թվականների կեսերին, երբ ցարական կառավարությունը մի քանի հետաձգումներից հետո վերջապես կյանքի կոչեց Անդրկովկասում մեծաթիվ ռուս գաղթականների, զերազանցապես ադանդավորների, վերաբնակեցնելու նախօրոք մշակած ծրագիրը:¹¹ Երկրամասը Ռուսաստանի համար հուսալի էթնիկական տարրով բնակեցնելու հարցը ցարական կառավարության համար առաջնահերթ խընդիր էր դարձել դեռևս XIX դարի 20-ական թվականներից: Ընդ որում, *հուսայի տարր* հասկացության տակ թե՛ ցարական շինովնիկները և թե՛ Կովկասի կուսակալ Պասկևիչն ինքը, նկատի ունեին միայն մալոռուս կազակներին, որոնց տեղավորելով Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի սահմանամերձ վայրերում, ցարական կառավարությունը մտադիր էր Ռուսաստանից հետագա պարբերաբար համալրումների հաշվին ձևավորել այսպես կոչված «*Արաքսի կազակությունը*»: Այս մասին առաջին անգամ, դեռևս մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքումը, իրենց խոսքն ասացին ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչն ու Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ի. Պասկևիչը: Վերջիններս գտնում էին, որ նորա-

⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82:

⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 447, էջ 32-33:

⁹ Բաջրեբունի, Կարաքիլիսա, Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, 27 հունվարի, N 3, էջ 3-4:

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 84, մաս Բ:

¹¹ Ռուս ադանդավորներով Անդրկովկասյան երկրամասը վերաբնակեցնելու ցարական կառավարության վերոնշյալ քաղաքականության մասին մանրամասն տե՛ս Ա. Հայթյան, Հայաստանի ռուս վերաբնակները 1830-1920թթ., Եր., 1989:

նվաճ տարածքները մարդաբնակ դարձնելու, մաս Արևելյան Հայաստանը տնտեսապես օգտագործելու խնդրի միակ լուծումը տեղում «*զինվորական բնակավայրերի*» ստեղծումն է, որոնցում սկզբնական շրջանում պիտի բնակեցվեին շուրջ 80000 կազակներ:¹² Դիբիչն ու Պասկևիչը կանխատեսում էին Արևելյան Հայաստանի տարածքում «*զինվորական բնակավայրերով*» սպահովել պարսկական սահմանի անվտանգությունը, սանձահարել այդ տարածքում ապրող ասիական ցեղերին, գ) ավելի մերձենալ հայերին, Ռուսաստանի խորքերից հավաքագրված զինվորներին փոխարինել տեղի կլիմային ընտելացած մարդկանցով ու այդպիսով կրճատել, իսկ հնարավորության դեպքում մաս իսպառ վերացնել զորքերի մեջ բարձր մահացությունը, մալոռուս աղքատ կազակների համար նոր բնակավայրերում ստեղծել բարեկարգ վիճակ և տեղում մնացածների վիճակը բարելավելու նպատակով Մալոռուսիան ազատել ավելորդ բնակչությունից:¹³

80000 կազակների ընդունելու, նրանց սահմանամերձ շրջաններում բնակեցնելու, ինչպես մաս կազակային 10 օկրուգներ (յուրաքանչյուր օկրուգն ունենալու էր 200000 դեսյատին հող և 8000 բնակիչ) ստեղծելու նպատակով 1827թ. կոմս Պյոտր Տոլստոյի գլխավորությամբ նույնիսկ ստեղծվեց հատուկ կոմիտե.¹⁴ սակայն վերոհիշյալ ծրագրի իրագործումը մեծ ծախսեր ու երկար ժամանակ պահանջելու պատճառով այդ շրջանում իրագործելի չէր: Այդ պատճառով էլ ցարական կառավարությունը, դրա իրագործումն ապագային թողնելով, իր սահմանամերձ շրջանների գոնե մի մասը էթնիկական հուսալի տարրով շուտափույթ բնակեցնելու հարցի մասնակի լուծումն առայժմ տեսնում էր Պարսկաստանից հայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու մեջ:

Արևելյան Հայաստանում 20000 ընտանիք մալոռուս կազակներ վերաբնակեցնելու Պասկևիչի երկրորդ ծրագիրն արքունիք ներկայացվեց 1829թ.: Սակայն վերոբերյալ պատճառներով այն ևս չհաջողվեց իրագործել: Փոխարենը, ինչպես զիտենք, ընդամենը 95000ռ. ոսկով ու 380000ռ. արծաթով ռուսական կառավարությունը կազմակերպեց 12357 ընտանիքների գաղթը Տաճկահայաստանից:

Անդրկովկասը ռուսներով վերաբնակեցնելու խնդրին Պասկևիչն երրորդ ու վերջին անգամ անդրադարձավ 1830թ. սկզբներին: Ապրիլ ամսին ցարին ներկայացնելով Անդրկովկասում նոր վարչատարածքային բաժանում անցկացնելու և ռուսական կառավարչաձև մտցնելու իր նախագիծը, նա մաս ընդգծում էր, թե «...*ինքնակալական պետության անհրաժեշտ հատկությունն է...ստեղծել մաս ռուսական գաղութներ, հիմնել զինվորական բնակավայրեր, ինչպես մաս ռուս գյուղացիների բնակավայրեր... և այլն*»:¹⁵ Ի հեճուկս երկրամասը ռուսականացնելու պասկևիչյան բռուն ցանկությանն ու այս ուղղությամբ նրա թափած ջանքերին՝ այս վերջին ծրագրին ևս վիճակված չէր իրականանալու իր թանկության ու երկարաժամկետության պատճառով:

Անդրկովկասի ռուսականացմանը ցարական կառավարությունը լրջորեն ձեռնամուխ եղավ միայն XIX դարի 40-ական թվականների կեսերից, երբ տարածաշրջանում իր տիրապետությունն ավելի ամրապնդելու նպատակով, առայժմ միայն Արևելյան Հայաստանում, սկսեց վերաբնակեցնել մեծ թվով ռուս աղանդավորների: Այս խընդիրն առաջին անգամ կարևորել է դեռևս Պասկևիչը՝ ցարին հղված 1830թ. ապրիլյան նամակում, որտեղ ի մասնավորի ընդգծում էր, թե երկրամասում ռուսական գաղութներ հիմնելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Ռուսաստանի ներքին մահանգներից աղանդավորների՝ որպես «անհանգիստ տարրի», այստեղ վերաբնակեցմանը: «*Ըսկ այս բոլորն արագ ու հարմար կատարելու համար մարդիկ կարելի է ստանալ գորակոչի միջոցով*»: Ի դեպ, Պասկևիչն առաջարկում էր գորակոչել մաս «բոլոր անդամախեղներին, ...բոլոր փախստականներին ու թափառաշրջիկներին և ուղարկել Անդրկովկաս»:¹⁶

¹² АКАК, т. 7, стр. 332, 339-340.

¹³ Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ 51, վավ. 93, էջ 1-3, վավ. 94:

¹⁴ Վ. Պ ա ռ ա մ Վ յ ա ն, Գ ռ ի ի ղ յ է ղ ո Վ ի ղ և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1947, էջ 104:

¹⁵ «Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIXв.», ч. 1, М.-Л., 1936, стр. 231-232.

¹⁶ «Колониальная политика российского царизма», ч. 1, стр. 231-232.

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ չնայած Անդրկովկասյան երկրամասի ռուսականացման պասկևիչյան նախագծի ընդհանուր առմամբ ճախողմանը, այնուամենայնիվ դրա որոշ հողվածներ մի քանի ամիս անց սկսեցին գործադրվել: Դրանցից մեկը հենց վերաբերում էր Կենտրոնական Ռուսաստանից աղանդավորականներին դեպի Անդրկովկաս հեռացնելուն ու այստեղ տեղացիների նկատմամբ նորեկների համար արտոնյալ պայմաններ ստեղծելուն: Նկատի ունենք առաջին հերթին՝ առանց տեղացիների կարծիքը հաշվի առնելու վերաբնակներին առատորեն հողով ապահովելը, նրանց հարկային ու այլ արտոնություններ շնորհելը և այլն: Քայլեր, որոնք ցարական կառավարության համոզմամբ աղանդավորականներին հետ էին վերադարձնելու ուղղափառ հավատքին:

Պասկևիչյան նախագծում ցարի հավանությանն արժանացած մյուս հողվածը վերաբերում էր Անդրկովկաս ուղարկվելիք աղանդավորներին Ռուսաստանի ներքին նահանգներից զինակոչի միջոցով հայտնաբերելուն: Ի դեպ, նախագծի այդ դրույթը գործնականում կիրառվեց ցարին ներկայացվելուց ընդամենը վեց ամիս անց: Այսպես, նպատակ ունենալով արագացնելու Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի ռուսականացման գործընթացը, Նիկոլայ Ա-ն 1830թ. հոկտեմբերի 20-ին հրապարակում է աղանդավորների նկատմամբ մինչ այդ ընդունված օրենքներից ամենախիստն ու ծանրը: Բոլոր զինապարտ աղանդավորներին, որոնք կրոնվեին և կմեղադրվեին հերձվածողության մեջ, հրամայվում էր զորակոչել և ծառայության ուղարկել Կովկասյան կորպուս: Միաժամանակ հրամայվում էր Անդրկովկաս բնակության ուղարկել նաև զինվորական ծառայության համար ոչ պիտանիներին և կանանց, իսկ տեղական (անդրկովկասյան) իշխանություններին էլ՝ լուծել վերջիններիս ընդունման, տեղավորման և հողով ապահովման հարցերը:¹⁷

Սա, ըստ էության, Արևելյան Հայաստանը ռուս աղանդավորներով վերաբնակեցնելու ցարական կառավարության քաղաքականության սկիզբը եղավ: Իսկ Ալեքսանդրապոլի գավառի ռուսականացումը բուռն թափով սկսվեց միայն XIX դարի 40-ական թվականների կեսերից: 1844թ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ ռազմուղու վրա՝ Լոռու Մեծ Վարաբիխա գյուղի օգուագործման տակ գտնվող Օրբելյանների կալվածատիրական հողերում, որ աչքի էին ընկնում առողջ կլիմայով և հարմար էին անասնապահության ու հողագործության համար, հիմնվեց Ալեքսանդրապոլի գավառի առաջին ռուսական գյուղը՝ Վորոնցովկան:¹⁸ Վերջինիս բնակիչները՝ մեծամասամբ Օրենբուրգի և Մարատովի նահանգներից ելած մուկլաններ, Անդրկովկասում էին հայտնվել դեռևս 1834թ. և շուրջ մեկ տասնամյակ տևած թափառումներից հետո միայն կարողացան հիմնել Վորոնցովկան: 1849թ. գյուղն ուներ արդեն 141 ընտանիք, մեկ տարի անց ավելացավ ևս 143 ընտանիք, որից 122-ը Արևելյան Հայաստան էր եկել դեռևս 1834-1836թթ.:¹⁹ Արխիվային նյութերից հստակ երևում է, որ բնակչության թվի արհեստական աճն ի հաշիվ նոր վերաբնակների Վորոնցովկայում շարունակվել է նաև հետագա տարիներին: Այսպես, Վորոնցովկայում վերահաստատվելու նպատակով արդեն 1846թ. սկզբին գավառի Փամբակի տեղամասի պետին էին դիմել Գանձակի և Շամախու նահանգների մի շարք գյուղերի ռուս վերաբնակներ, որոնք չդիմանալով տեղական կլիմային (շոգին) և ժողովրդի ոչ բարեհամբույր վերաբերմունքին՝ թույլություն էին խընդրում տեղափոխվելու Ալեքսանդրապոլի գավառ: Այս մասին Կովկասի փոխարքային տեղեկացնելով՝ Ալեքսանդրապոլի գավառապետը միաժամանակ նշում էր, թե Շամախու նահանգի Թովչի գյուղի ողջ ռուս բնակչությունը չնչին բացառությամբ (երկու ընտանիք Ելենովկայում և հինգ ընտանիք Նովոսարատովսկայայում) իր թույլությունը վերաբնակվել են Վորոնցովկայում:²⁰ Թե ռուսական կառավարության կողմնակալ քաղաքականությունն ինչ ազդեցություն ունեցավ այս գյուղի հետագա աճի վրա, պարզ երևում է XIX դարի երկրորդ կեսին իրար հաջորդած մարդահամարների տվյալներից: Այսպես, 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով Վորոնցովկայում

¹⁷ Ա. Հ ա յ թ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 177:

¹⁸ Վ. Խ ո ջ ա բ ե կ յ ա ն, *Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը*, Եր., 1979, էջ 48:

¹⁹ Ա. Հ ա յ թ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 59:

²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 329, էջ 361:

ազգաբնակչության թիվը 926 մարդ էր (450-ը արական, 476-ը իգական սեռի)²¹, ապա 15 տարի անց՝ 1867թ., հասավ 2284 մարդու (1189-ը արական, 1095-ը իգական սեռի)²²

Վորոնցովկայի հիմնադրման տարում Ալեքսանդրապոլ-Դիլիջան ճանապարհի վրա՝ Համգաշիմանի մոտ, հիմնվեցին ևս երկու ռուսական գյուղեր՝ Նիկիտինոն և Վոսկրեսենովկան (Վոսկրեսենսկա):²³ Նիկիտինոն 1852թ. արդեն ուներ 56 ընտանիք կամ 388 մարդ (204-ը արական, 184-ը իգական սեռի):²⁴ Վոսկրեսենովկայում 1852թ. դրությամբ ապրում էր 61 ընտանիք՝ 375 մարդ (194-ը արական, 181-ը իգական սեռի)²⁵:

Արևելյան Հայաստանի ռուսականացման գործընթացի հաջորդ փուլը սկսեց իրագործվել XIX դարի 40-ական թվականների վերջերին, երբ ցարական կառավարությունը, հաշվի չառնելով Արևելյան Հայաստանի տեղացի գյուղացիության հողածառավ վիճակը, Սևանա լճի ավազանում, Ալեքսանդրապոլի գավառում, Լոռվա դաշտում հայկական գյուղական համայնքներից ընդարձակ հողակտորներ առանձնացրեց՝ ռուս աղանդավորների վերաբնակեցման համար ստեղծելով այսպես կոչված՝ «Հատուկ ֆոնդ»: Վերաբնակեցման այս նոր փուլն ամբողջությամբ իրագործվեց Երևանի գավառապետ Բալավատսկու և վերևում արդեն հիշված Ֆադեևի ծրագրով: Վերջինս Արևելյան Հայաստանը ռուս աղանդավորներով վերաբնակեցնելու իր ագրեսիվ ձգտումների մեջ գերազանցեց Բալավատսկուն: 1849թ. մայիսի 13-ին Երևանի նահանգապետին ներկայացրած իր զեկույցում Ֆադեևը գրում էր, թե Ալեքսանդրապոլի գավառում գտել է երկու հարմար տեղամաս ռուս աղանդավորներով վերաբնակեցնելու համար: Դրանցից մեկը «Շորագյալի Էլիզար կոչված վայրն է, ուր համաձայն այս տարվա չափումների կա, շուրջ 6928 դեյաստին օգտակար հողամաս, հետևաբար յուրաքանչյուր ընտանիքի համար 30 դեյաստին հող նախատեսելով, այնտեղ կարելի է բնակեցնել մինչև 230 ընտանիք»:²⁶ Գտնվելով Ալեքսանդրապոլ-Ախալցխա ճանապարհի վրա՝ տեղամասը հեռու չէր արդեն գոյություն ունեցող ռուսական (դուխոբորների ու մոլոկանների) գյուղերից, այնպես որ Ֆադեևի համոզմամբ ու գավառապետի կարծիքով՝ ոչ մի խոչընդոտ չկար այն ռուս վերաբնակներով զբաղեցնելու համար:

Ռուսներով վերաբնակեցնելու համար նախատեսված երկրորդ տեղամասը, ըստ Ֆադեևի, հենց Ալեքսանդրապոլ քաղաքն էր, ուր նա առաջարկում էր բնակեցնել 20 ընտանիք միայն արհեստավորների:²⁷ Նրա ծրագրի առաջնահերթ նպատակը ընդհանրապես Ալեքսանդրապոլի հարթավայրի և Ախուրյան գետի միջին հոսանքի ձախափնյա բոլոր տարածությունների վերաբնակեցումն էր ռուսներով: Նա մտորում էր ռուսական գյուղեր հիմնել նաև Ալեքսանդրապոլ-Դիլիջան մայրուղու ամբողջ երկարությամբ՝ գտնելով, որ Ալեքսանդրապոլի գավառի հատկապես Լոռվա դաշտի բնակեցումը ռուսներով բացառիկ նշանակություն կունենա Երևանի ու Թիֆլիսի նահանգներն իրար միացնող ուղեհանգույցում ուժեղ հենակետ ստեղծելու տեսակետից: Ալեքսանդրապոլի գավառը ռուս աղանդավորներով վերաբնակեցնելու Ֆադեևի ծրագրի մեխը հենց գավառի բոլոր ճանապարհները ռուսական գյուղերով շրջապատելն էր: Այդ մասին Երևանի նահանգապետին ներկայացրած իր զեկուցագրերից մեկում նա գրում էր. «Ավելի օգտակար է 100 ընտանիք ունեցող ռուսական գյուղեր հիմնել ցարական ճանապարհի (Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ա.Հ.)²⁸ երկայնքով... գարնանից մինչև խոր աշուն այդ ճանապարհով անընդհատ անցնում են Կողքի աղահանքից աղ տեղափոխող փոխադրամիջոցները և քանի որ այս վայրերում ջուր կա, ապա կառավարմանը ձգտում են այդ կետին: Եթե այդտեղ լինի ռուսական գյուղ, ապա գյուղացիները պարենային ապրանքներ վաճառելով զգալի եկամուտներ կունենան: Բացի դրանից, իրենք ևս կարող են զբաղվել Կողքից Ալեքսանդրապոլ և այստեղից էլ Թիֆլիս աղ փո-

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110, էջ 510-547:

²² «Кавказский календарь на 1899 год», Тифлис, 1898, отд. III, стр. 3.

²³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 359, էջ 6:

²⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110, էջ 548-562:

²⁵ Նույն տեղում, էջ 491-508:

²⁶ Ա. Հ ա յ թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 47:

²⁷ Նույնը:

²⁸ Ցարական ճանապարհի մասին մանրամասն տե՛ս Взгляд на Эриванскую дорогу, Сборник газеты «Кавказ», изд. О. И. Константинов, второе полугодие 1847 года, Тифлис, 1848.

խաղրելով: Նրանք փոխադրական կապ կպահպանեն Երևանի և Ալեքսանդրապոլի միջև և հետագայում հնարավորություն կստանան փոստակայան պահելու»:²⁹

Ցարական կառավարությունը Ֆադեևի վերոհիշյալ նախագծերին լրջորեն անդրադարձավ արդեն 1850թ. սկզբներից, երբ Երևանի նահանգում, արխիվային տվյալների համաձայն, հաստատվեցին մոտ 500 ընտանիք ռուս աղանդավորներ:³⁰ Վերաբնակեցման պաշտոնական թույլտվությունից (1850թ. մարտի 28) հետո Արևելյան Հայաստան տեղափոխվեցին և 15080 դեսյատին 3574 սաժեն հողի վրա (այդ թվում Ալեքսանդրապոլի գավառում՝ Էլիդար տեղամասում 6928 դեսյատին 1574 սաժեն, Ալեքսանդրապոլ քաղաքի մոտ՝ 60 դեսյատին, Դարաչիչագի և Ալեքսանդրապոլի միջև ընկած Միսխանա տեղամասում՝ 1906 դեսյատին) հաստատվեցին ևս 500 ընտանիք ռուս աղանդավորներ: Յուրաքանչյուր նորեկ ընտանիքի կառավարության 1848թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ տրվում էր 8-ամյա հարկային արտոնություն ու մեկ անձի համար միջինը 6-7 դեսյատին հող (այդ որոշումը կանոնի Անդրկովկաս եկած և այստեղ կրկին ուղղափառ հավատքի դարձած բոլոր վերաբնակիչներին մաս 25 տարով ազատվում էր հարկերից):³¹ Դա այն դեպքում, երբ Ատրպետի հավաստմամբ՝ մեկ անձի համար տեղաբնակ հայերը ունեին միայն 1-3 դեսյատին հող (չառ հայկական գյուղեր նույնիսկ յայլա և արտատեղեր չունեին իրենց սահմաններում), թաթարները (թուրքերը, պարսիկները)՝ 4-5 դեսյատին, իսկ Թուրքիայից գաղթած ուղղափառ հույները՝ 5-6 դեսյատին:³²

Թե 1850թ. հետո Արևելյան Հայաստանում վերաբնակեցված վերոհիշյալ 500 ընտանիք ռուս աղանդավորներից քանիսը վերջնականապես հաստատվեցին Ալեքսանդրապոլի գավառում, արխիվային նյութի բացակայության պատճառով ճշտիվ նշելն անհնար է: Եվ այնուամենայնիվ, ի մի բերելով մեր ունեցած տվյալները գավառում հաստատված ռուս աղանդավորների քանակի վերաբերյալ, կարելի է արձանագրել հետևյալը. XIX դարի կեսից Անդրկովկասյան երկրամասի՝ բոլոր թափով սկսված ռուսականացման ցարական կառավարության քաղաքականության արդյունքում Ալեքսանդրապոլի գավառի միայն Փամբակի և Լոռվա տեղամասերում 383 ընտանիք կամ 2232 ռուս վերաբնակները հիմնեցին չորս գյուղեր: Ընդ որում, եթե Փամբակի տեղամասում հիմնված Վոսկրեսենովկա և Նիկիտինո գյուղերը բնակեցվեցին բացառապես ռուս աղանդավորներով (117 ընտանիք), ապա Լոռվա տեղամասում հիմնված երկու գյուղերից (Պրիվոլնոյե և Վորոնցովկա) աղանդավորական էր միայն վերջինը, իսկ Պրիվոլնոյեն հիմնվեց աղանդավորների հետ միաժամանակ գավառում վերաբնակեցված 96 ընտանիք ուղղափառ ռուսների կողմից:³³ Ինչ վերաբերում է Ֆադեևի ծրագրով ռուս աղանդավորների 20 արհեստավորական ընտանիքներ Ալեքսանդրապոլում վերաբնակեցնելուն, ապա մեր ունեցած տվյալներով այս գործընթացն իր նախնական փուլում ընթանում էր համեմատաբար դանդաղ. մինչև 50-ական թվականների կեսերը ցարական կառավարությանը հաջողվել էր քաղաքում տեղավորել ընդամենը 14 ռուս աղանդավորի:³⁴ Եվ միայն 50-ական թվականների վերջերին այդ թիվը կտրուկ աճեց՝ Ալեքսանդրապոլի գավառապետի զեկուցագրի համաձայն քաղաքում հասնելով 124 մարդու (67-ը արական, 57-ը իգական սեռի)³⁵:

XIX դարի ամբողջ 40-ական թվականների ընթացքում քաղաքային բնակչությունը անընդհատ աճում էր, ընդ որում՝ պարբերական և համաչափ: Եթե պարսկահայերի և թուրքահայերի զանգվածային ներգաղթից հետո (1831թ.) Շորագյալի գավառի Գյումրի գյուղում բնակչության թիվը հասավ 1350 ընտանիքի (7250 մարդ), ապա արդեն 1848թ. Ալեքսանդրապոլում ուներ 1957 ընտանիք, այդ թվում հայեր էին 1871 ընտա-

²⁹ Ա. Հ ա յ թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 48:

³⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 359, էջ 10:

³¹ Ա. Հ ա յ թ յ ա ն, նշվ. աշխ., էջ 92:

³² Ատրպետ, Հողատիրությունը Կովկասում, Ալեքսանդրապոլ, 1906, էջ 34:

³³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110, էջ 563-585:

³⁴ "Кавказский календарь на 1855 год", Тифлис, 1854, отд. III, стр. 332-333.

³⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14-1 մաս, էջ 63:

նիքը՝ քաղաքի բնակչության 95.6%-ը, հույներ էին միայն 27 ընտանիքը՝ 1.4%-ը, մահմեդականներ՝ 59 ընտանիքը՝ 3%-ը:³⁶

Քաղաքում բնակչության թվի համաչափ աճը շարունակվեց նաև հաջորդ տարիների ընթացքում: Այսպես, եթե 1849թ.՝ Ֆադեևի կողմից Ալեքսանդրապոլի գավառը ռուս ադանդավորներով վերաբնակեցնելու նախագիծը կազմելու նախօրեին, Ալեքսանդրապոլը նորակազմ Երևանի նահանգում իր մարդաշատությամբ Երևանից հետո երկրորդն էր (1962 ընտանիք կամ 10260 մարդ) և առաջինն իր բնակչության միատարրությամբ (հայեր էին 95.8%-ը, 1.3%՝ հույներ, 2.5%-ը՝ մահմեդականներ):³⁷ Երկուսն էլ 1850-1851թթ.՝ վերոհիշյալ ծրագրի իրագործման պահին, քաղաքային բնակչության թիվը հասավ 11280 մարդու (6000-ը արական, 5280-ը իգական սեռի): Միևնույն ժամանակ քաղաքում երևան եկան ցարական կառավարության՝ Արևելյան Հայաստանը ռուսներով վերաբնակեցնելու առաջին թույլ նկրտումները. հայ, հույն և մահմեդական բնակիչների կողքին Ալեքսանդրապոլում հայտնվեցին առաջին ռուս վերաբնակները՝ 11 մարդ (բնակչության 0.1%-ը): Քաղաքային բնակչության մնացած 99.9%-ը ըստ ազգությունների ուներ հետևյալ պատկերը. հայերն Ալեքսանդրապոլում ճնշող մեծամասնություն էին և կազմում էին քաղաքային բնակչության 94.9%-ը (10696 մարդ), մահմեդականներ էին 3.6%-ը (410 մարդ), հույներ՝ միայն 1.4%-ը (163 մարդ):³⁸

Այժմ փորձենք ներկայացնել նաև այն փոփոխությունները, որոնք գրանցվեցին Ալեքսանդրապոլի գավառի երկու՝ Փամբակի և Շորագյալի գավառակների (տեղամասեր) գյուղական բնակչության էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական վիճակի մեջ XIX դարի 40-50-ական թվականներին:

XIX դարի 40-ական թվականների սկզբներից Արևելյան Հայաստանի ռուսականացման ծրագրի իրագործմամբ Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասում մեկը մյուսի հետևից հիմնվեցին ռուսական Վորոնցովկա, Վոսկրեսենովկա, Նիկիտինո և Պրիվոլնոյե գյուղերը: Սակայն Փամբակում, մեր կարծիքով, ամենահետաքրքրիքի իրադարձությունները վերաբերում են 40-ական թվականների վերջերին: Այսպես, 1848թ. բոլորովին խաղաղ պայմաններում, սկսվեց հայ ազգաբնակչության արտագաղթ Փամբակի տեղամասից դեպի Շորագյալի տեղամաս: Թեև պաշտոնական փաստաթղթերում այս մասին որևէ բացատրություն չկա, այնուամենայնիվ դա ուղղակիորեն առնչվում է Ալեքսանդրապոլի գավառը ռուս ադանդավորներով վերաբնակեցնելու խնդրին: Նախ հայերի արտագաղթը կարող էր կազմակերպված լինել հենց ռուսական իշխանությունների կողմից՝ տեղում ռուս վերաբնակների համար նոր հողեր ազատելու նպատակով: Երկրորդ, այդ արտագաղթի պատճառ կարող էր լինել նաև ռուս ադանդավորների հետագա վերաբնակեցման նպատակով հողային «Հատուկ ֆոնդի» ստեղծումը՝ առանց տեղաբնակների կարծիքը հաշվի առնելու, որի պատճառով Փամբակի տեղամասի բնիկ հայերը, կորցնելով իրենց գոյությունն ապահովող առանց այն էլ փոքր հողակտորները, ստիպված էին լինում տեղափոխվել Շորագյալ: Թե այս պատճառներից որն էր իրականը կամ առաջնայինը, էական չէ: Փաստն այն է, որ 1848-1850թթ. ընթացքում Փամբակից գաղթեցին և Շորագյալում հաստատվեցին մոտ 90-100 ընտանիք հայեր: Այդ թվի մոտավորության առիթով նշենք, որ նորեկների կողմից Շորագյալում հիմնված յոթ գյուղերից (Բազարխանա, Քեշիշ-Քենտ, Մանջուխի, Սաբունջի, Ախ-Ղուլի, Արդուլ-Ռահման և Փոքր Ղըրխ) առաջին հինգը, համաձայն 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների, բնակեցվեցին միայն փամբակցիների 80 ընտանիքներով:³⁹ Մինչդեռ Արդուլ-Ռահման և Փոքր Ղըրխ գյուղերում գաղթած փամբակցիների կողքին հայտնվեցին նաև Շորագյալի Փոքր Արղիսվալի, Փոքր Ղարաքիլիսա և Թափաղուլակ գյուղերից ելածներ, և 1852թ. այդ երկու գյուղերն ունեին արդեն 32 ընտանիք (73 մարդ) բնակչություն, որում մեր կարծիքով, փամբակցիների ընդհանուր թիվը չէր գերազանցելու 10-20 ընտանիքը:

³⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97:

³⁷ "Кавказский календарь на 1850 год", Тифлис, 1849, отд. III 33-34.

³⁸ "Документы и материалы по истории Армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870)", Ер., 1993, док. 141, стр. 343-344.

³⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 109:

Ժողովրդագրական դրության վերոհիշյալ փոփոխություններով հանդերձ՝ Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասի 51 գյուղերում բնակչության թիվը 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն հասավ 2138 ընտանիքի կամ 13567 մարդու⁴⁰: Ազգաբնակչության թվի աճը տեղամասում այս անգամ ևս եղավ գերազանցապես ի հաշիվ այլազգիների: Սրանք 1842թ. 200 ընտանիքի կամ 14%-ի փոխարեն 1852թ.-ին կազմեցին 548 ընտանիք կամ 3306 մարդ, որ գավառակի ընդհանուր բնակչության արդեն 25.7%-ն էր: Ընդ որում, այլազգիների մեջ գերակշռողը դարձան ռուսները՝ 383 ընտանիք, որ կազմում էր գավառակի ընդհանուր բնակչության 18%-ը: Մինչդեռ գավառակի ութ գյուղերում ամբողջությամբ, իսկ մեկում՝ Ղուրսալիում հայերի հետ խառը բնակվող և ընդհանուր առմամբ 165 ընտանիք կամ 1074 մարդ մահմեդականները կազմեցին բնակչության միայն 7.7%-ը: Ինչ վերաբերում է Փամբակի հայ բնակչությանը, ապա նրա թիվը 1842թ. 1250 ընտանիքների փոխարեն 1852թ. հասավ մինչև 1590 ընտանիքի (10261 մարդու): Այնուհանդերձ տոկոսային հարաբերությամբ այն նվազեց և 1842թ. 86%-ից 1852թ. իջավ մինչև 84.3%-ի: Ի դեպ, հայերը միատարր չէին դավանանքով. Գավառակի 33 գյուղեր ամբողջովին բնակեցված էին 1479 ընտանիք (9557 մարդ) կազմող հայ-լուսավորչականներով (մեկում՝ Ղուրսալիում նրանք ապրում էին մահմեդականների հետ խառը): Սա Փամբակի ամբողջ բնակչության 69%-ն էր և հայ տարրի 93%-ը: Հայ-կաթոլիկները՝ 111 ընտանիք (704 մարդ), բնակվում էին միայն հինգ գյուղերում՝ կազմելով գավառակի ընդհանուր բնակչության 5.3 և հայ բնակչության 7%-ը:

Նույն ժամանակահատվածում Շորագյալի գավառակի ժողովրդագրական դրության մեջ ևս գրանցվեցին փոփոխություններ, որոնք XIX դարի կեսերին էլ ավելի նկատելի դարձրին գավառի երկու հատվածների՝ Փամբակի և Շորագյալի տեղամասերի էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերների միջև եղած տարբերությունները: Այսպես, եթե Փամբակի տեղամասի համար XIX դարի 40-ական թվականների վերջը նշանակալից հայ տարրի արտագաղթով ու այլազգիների ներգաղթով, ապա Շորագյալի տեղամասում, հակառակը, այլազգիների և հատկապես մահմեդականների արտագաղթով և հայերի ներգաղթով: Դրա շնորհիվ ընդամենը երեք տարվա ընթացքում՝ մինչև 1850թ., գավառակում մեկը մյուսի հետևից հիմնվեցին 12 գյուղեր (Բազարխանա, Քեշիշ-Քենդ, Մանջուխի, Մասուղի, Աբդուլ-Ռահման, Ղզլ-Ղուլա, Փոքր Ղրղիս, Սաբունջի, Ախ-Ղուլի, Փամս, Փոքր Դուզբենդ, Ղզլ-Ղուլ)՝ գյուղերի թիվը 76-ից հասցնելով 88-ի: Ընդ որում, ինչպես վերևում նշեցինք, այդ 12 նորաստեղծ գյուղերից յոթը հիմնվեց փամբակցիների կողմից, մեկը՝ Մասուղիին, 1849թ. Սարչապետից Շորագյալ գաղթած հայերի և եզդիների կողմից ու դարձավ խառը ազգաբնակչությամբ (եզդիների գերակշռությամբ) միակ գյուղն ամբողջ տեղամասում: 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով՝ գյուղում ապրող 45 ընտանիքներից կամ 250 մարդուց եզդիներ էին 28 ընտանիքը (139 մարդ): Եվ վերջապես մյուս չորս գյուղերը Շորագյալի տեղամասում 1848-1850թթ. ընթացքում հիմնեցին բնիկ շորագյալցիները. 1848թ. Շորագյալի Ճզրխար և Դուզբենդ գյուղերից ելածները հիմնեցին Ղզլ-Ղուլա գյուղը, որ 1852թ. ուներ 7 ընտանիք (61 մարդ)⁴¹: Երկրորդը՝ Փամսը, բնակեցվեց միայն Փոքր Դարաքիլիսայից ելածներով և 1852թ. ուներ 13 ընտանիք (84 մարդ)⁴²: Հաջորդ՝ 1849թ. հիմնվեցին Փոքր Դուզբենդն ու Ղզլ-Ղուլը: Առաջինը հիմնվեց Շորագյալի Դուզբենդ գյուղից ելածների կողմից և 1852թ. ուներ 15 ընտանիք (67 մարդ): Նույնքան ստույգ նշել, թե Շորագյալի որ գյուղից ելածները հիմնեցին Ղզլ-Ղուլը, աղբյուրների սակավության պատճառով անհնար է: Հայտնի է միայն այն, որ 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով գյուղն ունեցել է 20 ընտանիք (113 մարդ) բնակչություն:⁴³

⁴⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110; Ջ. Հովհաննիսյան, Ռ. Նահապետյան, Վիճակագրական տեղեկություններ Լոռու գավառակի վերաբերյալ (1851-1914թթ.), ԲՀԱ, N 2, Եր., 1988, էջ 29:

⁴¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110:

⁴² ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110:

⁴³ Նույնը:

Ինչ վերաբերում է նույն ժամանակահատվածում Շորագյալից մահմեդականների արտագաղթին, ապա տվյալների բացակայության պատճառով մեզ չհաջողվեց պարզել, թե 1840-1850-ական թվականների արանքում կոնկրետ երբ և ինչ ուղղություններով արանք հեռացան գավառակից: Փաստ է միայն այն, որ եթե 1842թ. կամերալ ցուցակագրման վերստուգման տվյալներով Շորագյալի գավառի երեք լրիվ մահմեդական և երեք խառը հայ-մահմեդական բնակչությանը գյուղերում կային 34 ընտանիք (128 մարդ) մահմեդականներ, ապա 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ Շորագյալում մնացել էր ընդամենը մեկ մահմեդական գյուղ՝ Թաթարական Գյուղաղարան, միայն 21 ընտանիքով (116 մարդ):

Վերոհիշյալ փոփոխությունների հետևանքով 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով՝ Շորագյալի գավառակի արդեն 88 գյուղերում բնակչության թիվը հասավ 3685 ընտանիքի (19947 մարդու):⁴⁴ Ընդ որում, ինչպես արդեն մեկ նշել ենք, ի տարբերություն հարևան Փամբակի գավառակի, այստեղ բնակչության աճը գերազանցապես եղավ ի հաշիվ հայ տարրի ավելացման, որը 1842թ. եղած 2796 ընտանիքի փոխարեն 1852թ. հասավ 3636 ընտանիքի կամ 19692 մարդու: Մակայն որքան էլ զարմանալի է, քանակապես զգալիորեն աճելով հանդերձ, հայերի թիվը տոկոսային հարաբերությամբ նույնիսկ նվազեց՝ 1842թ. 98.8%-ից 1852թ. իջնելով 98.6%-ի: Վերացավ նաև գավառակի հայ բնակչության մինչ այդ գոյություն ունեցող կրոնական միատարրությունը: 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով՝ Շորագյալի հայ բնակչությունն ըստ դավանանքի արդեն բաժանվում էր երկու անհավասար խմբերի՝ հայ-յուսավորչականների և հայ-կաթոլիկների: Առաջինները 3502 ընտանիք էին (18993 մարդ) և կազմում էին գավառակի գյուղական բնակչության 95 ու հայ բնակչության 96%-ը: Երկրորդները՝ հայ-կաթոլիկները, 134 ընտանիք (699 մարդ), ապրում էին միայն Թափաղուկ, Քյաֆթառլի, Փալուտլի և Շիշթափա գյուղերում՝ կազմելով գավառակի գյուղական բնակչության 3.6 ու հայ բնակչության 4%-ը: Ինչ վերաբերում է Շորագյալի ոչ քրիստոնյա բնակչությանը, ապա վերջինիս թիվը գավառակում անցած մեկ տասնամյակի ընթացքում փոքր-ինչ աճելով, 1.2%-ի (34 ընտանիք) դիմաց 1852թ. հասավ 49 ընտանիքի կամ 285 մարդու, որ գավառակի գյուղական բնակչության թվի 1.4%-ն էր: Հարկ է նշել, որ գավառակում ոչ քրիստոնյա բնակչության թվի այս չնչին աճն արձանագրվեց ի հաշիվ 1849թ.-ին Մարչապետից հայերի հետ Շորագյալ գաղթած եզդիների (ընդամենը 28 ընտանիք կամ 139 մարդ): Սրանք արդեն 1852թ. կազմում էին գավառակի գյուղական բնակչության 0.8 և ոչ քրիստոնյա բնակչության 57%-ը, այն դեպքում, երբ շորագյալցի բնիկ մահմեդականները (ընդամենը 21 ընտանիք կամ 116 մարդ) կազմում էին գավառակի գյուղական բնակչության միայն 0.6 և ոչ քրիստոնյա բնակչության 43%-ը:

Փամբակի և Շորագյալի գավառակներում ժողովրդագրական վիճակի առանձնակի նկարագրությունների հիման վրա կարելի է վերականգնել ամբողջ Ալեքսանդրապոլի գավառի էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերը XIX դարակեսին:

1840թ. ձևավորված Ալեքսանդրապոլի գավառն իր բնակչության ազգային կազմի տեսակետից հիրավի եղավ ամենամիատարրը ամբողջ Անդրկովկասում: Նրա բնակչության թվի համաչափ աճը շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում. 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառն ուներ արդեն 44794 մարդ (23512-ը արական, 21282-ը իգական սեռի):⁴⁵ որից 11280-ը բնակվում էր Ալեքսանդրապոլ քաղաքում, որտեղ հայերը կազմում էին բնակչության ընդհանուր թվի 94.9%-ը, մահմեդականները (410 մարդ)՝ 3.6%-ը, հույները (163 մարդ)՝ 1.4%-ը, ռուսները՝ (11 մարդ) 0.1%-ը:

5823 ընտանիք (33514 մարդ) էր ապրում Ալեքսանդրապոլի գավառի 139 գյուղերում: 124 գյուղեր ամբողջությամբ, իսկ երկուսը (Մասուղին և Ղուրսալին) մասամբ՝

⁴⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 109:

⁴⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97, 109, 110, 120; "Кавказский календарь на 1852 год", Тифлис, 1851, отд. III, стр. 275; "Кавказский календарь на 1854 год", Тифлис, 1853, отд. III, стр. 121, 321-330; "Кавказский календарь на 1855 год", Тифлис, 1854, отд. III, стр. 332-347.

բնակեցված էին 5226 ընտանիք (29953 մարդ) կազմող հայերով, որ գավառի գյուղական բնակչության 90%-ն էր: Քանակով երկրորդը՝ 383 ընտանիք (2232 մարդ) ռուսներն էին, որ ապրում էին ընդամենը 4 գյուղերում և կազմում էին գավառի գյուղական բնակչության 6.5%-ը, միայն 3% էին կազմում գավառի 9 գյուղերում ամբողջությամբ և մեկում (Գուրսալի) հայերի հետ խառը ապրող 186 ընտանիք (1190 մարդ) մահմեդականները, իսկ մաստլիցի 28 ընտանիք (139 մարդ) եզդիները՝ 0.5%:

Ըստ դավանանքի նույն 139 գյուղերում ապրող 5923 ընտանիքները բաժանվում էին ութ խմբերի: Հայ-լուսավորչականներ էին Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության 85.5%-ն ու հայ բնակչության 95%-ը (4981 ընտանիք կամ 28550 մարդ): Հայ-կաթոլիկներ էին գյուղական բնակչության 4.5%-ը կամ հայերի 5%-ը: Ռուս աղանդավորներ էին գավառի բնակչության 4.9%-ը և ռուս ազգաբնակչության 75%-ը (287 ընտանիք կամ 1689 մարդ): Փոխարենը ուղղափառ ռուսներ էին բնակչության 1.6%-ը կամ ռուսների 25%-ը (96 ընտանիք կամ 543 մարդ): Խայտաբղետ պատկեր ուներ գավառի մահմեդական ազգաբնակչությունը. շիա մահմեդականներ էին գավառի գյուղական բնակչության 2%-ը կամ մահմեդական ազգաբնակչության 63.4%-ը (118 ընտանիք կամ 740 մարդ), սունիներ էին գյուղական բնակչության 0.7%-ը կամ մահմեդականների 25.3%-ը (47 ընտանիք կամ 334 մարդ), իսկ աղանդավոր մահմեդականներ էին գյուղական բնակչության 0.3%-ը կամ մահմեդականների 11.3%-ը (21 ընտանիք կամ 116 մարդ): Վերջապես, արևապաշտ էր գավառի եզդիական ազգաբնակչությունը, որ կազմում էր գավառի գյուղական բնակչության միայն 0.5%-ը: Այսպիսով, չնայած XIX դ. 40-ական թվականների կեսերից Ալեքսանդրապոլի գավառի ազգաբնակչության կազմի միատարրությունը փոքր-ինչ տեղի տվեց (1842թ. հայեր էին քաղաքաբնակների 96 և գյուղաբնակների 94.5%-ը, ապա 1852թ.՝ քաղաքաբնակների 94.9 և գյուղաբնակների 90%-ը), այնուամենայնիվ XIX դարակեսին նույնպես գավառը շարունակում էր մնալ որպես ամենամիատարրն ու հայեցին ամբողջ Անդրկովկասում⁴⁶:

ЭТНО - ДЕМОГРАФИЧЕСКАЯ И РЕЛИГИОЗНО - КОНФЕССИОНАЛЬНАЯ СИТУАЦИЯ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО УЕЗДА В 1840 - 50 ГГ.

____ Резюме ____

____ А. Айрапетян ____

На основе богатого архивного материала в статье досконально анализированы особенности демографического процесса и религиозно-конфессиональной ситуации в входящих в состав Александропольского уезда дистанциях Бамбака, Шорагыла и Лори. Вопрос подробно представлен по сельским поселениям, уточнены также некоторые уже существующие представления о динамике населения Гюмри, выявлены все факторы влияющие на демографическую и религиозно-конфессиональную картину уезда, в том числе и вспышка эпидемии чумы, процесс реализации программы руссификации уезда и.т.д.

⁴⁶ Ն. Ն ի կ ո ղ ու յ ա ն, Վիճակագրական տեղեկություններ Ալեքսանդրապոլի գավառի հայ-լուսավորչականների մասին, «Մտրճ», N 8, օգոստոս, Թիֆլիս, 1901, էջ 239-240; Армяно-католические церкви в Закавказье и число их прихожан, "Кавказский календарь на 1885 год", Тифлис, 1884, отд. III, стр. 69; Сборник сведений о Кавказе, т. 1, Тифлис, 1871, стр. 259.